

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՌՈՒՂԱՌՈՍ

ՅԵԼ

ԾԱՌԱՅԱՐԱՐՈՒՄՆԵՐ ԳՈՏԵՐԱՐԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈՒՆԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Թ. 874

25 դեկտ. 1932 ամի

Ս. ԵԶՄԻԱՍԻՆ



ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

ԲՈՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իւր նոյեմբերի 26-ի գրութեամբ յայտնելով Ձեզ նոյեմբերի 10-ին Ս. Էլմիաճնում գումարուած Աղգային-Եկեղեցական Ժողովի կողմից կատարուած Կաթողիկոսական ընտրութեան և նորա անունը Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում յիշատակելու մասին, ներկայիւս աւելի մանրամասնութիւններով իրազեկ է կացուցանում Ձեզ ժողովի գործունէութեան և որոշումներին, առաջարկելով հազորդել այն Ձեզ ստորագրեալ եկեղեցական վարչութիւններին և հաստատութիւններին:

Պատգամաւորները հաւաքուել սկսան Մ. Աթոռում նոյեմբերի 5-ին մեր Միութեան թեմերից և փոքր չափով արտասահմանից: Նոյեմբեր 6-ին Պատարագից առաջ հոգեհանգստեան կարգ կատարուեց Ս. Գէորգ Ե. Կաթողիկոսի գերեզմանի վրայ: Օրուան պատարագիչն էր Տ. Տեղակալը, որ Հայր մեր-ից առաջ քարոզ խօսեց Հայրապետական Աթոռի և Հայաստանեայց եկեղեցու նշանակութեան մասին, և ապա հանդիսադիր եղաւ իման սեղանի առաջ կատարուող Հայրապետական մաղթանքին: Դրանից յետոյ նա երգուեցրեց բոլոր պատգամաւորներին խղճի մտքը կատարելու իրենց պարտքը ընտրութեան գործում:

Նոյեմբերի 7, 8, 9 նախապատրաստական ոչ-պաշտօնական և մասնակի աշխատանքներ էին կատարուում ժողովի օրակարգի եւ կանոնաւոր ընթացքի նկատմամբ, իսկ պատգամաւորները ծանօթանում էին իւր աւեր հետ, այցելում հնազարեան վանքերն եւ աւերակները: Ընդունաւ ժողովներն սկսուեցան նոյեմբերի 10-ին առաւօտեան 11 ժամին Տեղակալ Տ. Խորէն Արքեպիսկոպոսի նախագահութեամբ եւ վաթսուէն եւ վեց պատգամաւորների մասնակցութեամբ: Տ. Տեղակալի հակիրճ հաւոյց և հոգեւոր Ս. Գէորգ Կաթողիկոսի յիշատակին «Հոգեւոյց» ասելուց յետոյ՝ ընտրուում է ատենապետութիւն և ապա մանդատային յանձնաժողով՝ պատգամաւորների թղթերն ստուգելու համար: Ատենապետութիւնը կազմուած էր վեց հոգուց՝ երեք ատենապետներ՝ — Ստեփան Մալխասեան, Գեղամ Տէր-Պետրոսեան և Լևոն Կիւմարչեան, քարտուղարներ՝ — Ստեփան Կանայան, Ռուբէն աւագ քահանայ Բէկգիւլեան և Կոստանդին Գիւլնազարեան: Մանդատային յանձնաժողովի անդամներ էին Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս. Տ. Երուսեղ

աւագ քահանայ Նալբանդեան, Տ. Սահակ աւագ քահանայ Սահակեան և Յովսէփ Տիգրանեան:

Պատգամաւորների յանձնարարականները ըստուգութեան ենթարկելուց յետոյ՝ նորոգուում է նիստը և հաստատուում օրակարգի հետեւեալ հարցերը, ատենապետութեան թողնելով նրանց քննութեան ենթարկելու կարգը:

1. Որոշումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եղանակի:

2. Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ղեկուցումներ՝ —

ա) Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հաստատութեան և գործունէութեան մասին:

բ) Մայր Աթոռի նիւթական կարիքների մասին:

գ) Հայաստանեայց եկեղեցու սահմանադրութեան մասին:

3. Ձեկուցումն Հայաստանեայց եկեղեցու բարեկարգութեան մասին:

4. Ընտրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

5. Ընտրութիւն Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամների:

6. Ողջոյն և գոհունակութիւն Աղգային-Եկեղեցական Ժողովի կողմից Խորհրդային Հայաստանի Կառավարութեան:

Ապա Տ. Տեղակալը կարդում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կողմից ղեկուցում նորա հաստատութեան եւ ութամեայ գործունէութեան մասին: Ժողովը յանձնարարում է ատենապետութեան բանաձե կազմել և բերել հաստատութեան:

Նոյն երեկոյեան նիստում Տ. Գարեգին Արքեպիսկոպոս կարդում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կազմած Սահմանադրութեան նախագծի, իսկ Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Մ. Աթոռի նիւթական կարիքների մասին ղեկուցումները: Ժողովը մտքերի օրիսանակութիւնից յետոյ՝ յանձնարարում է ատենապետութեան սրանց համար ևս բանաձեներ կազմել:

Այստեղ մէջ է բերուում ժողովի հաստատած բանաձեները երեք ղեկուցումների մասին, առաջինը հաստատուած նոյեմբերի 10-ի երեկոյեան նիստում, իսկ մնացած երկուսը նոյեմբերի 11-ի առաւօտեան նիստում:

Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հաստատութեան և գործունէութեան մասին ժողովը որոշում է —

1. Ողջունել Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հիմնումը և հասանութիւնն տալ 1924 թ.ի յունուարի 1-ի Հայրապետական կոնդակին, որով հիմնուում է Խորհուրդը:

2. Հասանութիւնն տալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի գործունէութեան նորա հիմնման օրից մինչև այսօր:

3. Ընդունել Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ներկայ կազմի հրաժարականը՝ շնորհակալութիւն յայտնելով նորա շրջահայեաց և օգտակար գործունէութեան համար, խնդրելով այդ պաշտօնը առժամանակ շարունակել մինչև նոր կազմի ընտրութիւնը ներկայ պատգամաւորական ժողովի կողմից:

Հայոց եկեղեցու Սահմանադրութեան քանաձևը. —

Յանձնարարել կեդրոնական Հոգեւոր Բարձրագոյն Իշխանութեան կազմել յատուկ մասնաժողով հմուտ անձերից և նրան յանձնել մշակել նախագիծ Հայոց եկեղեցու նոր Սահմանադրութեան, երկուստ ունենալով մեր եկեղեցու աւանդական ընտրական սկզբունքը, կանոնական ճանապարհով եկեղեցական գործերի կառավարութեան մէջ մեծուած բարեփոխութիւնները և ժամանակից իրաւագրքերը: Այս նախագիծը հաղորդել Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, և Երուսաղէմի ու Կ. Պոլսի Հայոց Պատրիարքներին և ի նկատի առնելով նրանց դիտողութիւնները, հաստատել Հայրապետական կոնդակով և մտցնել գործունէութեան մէջ: Իսկ առաջիկայ մեծաւորագոյն Ազգային-եկեղեցական ժողով գումարուելիս, առաջարկել նրան վերջնական քննութեան և հաստատութեան:

Մայր Աթոռի Նիւթական կարիքները զկուսցման մասին որոշում է —

1. ձանաչել Մ. Աթոռի Նիւթական վիճակը միանգամայն անապահով նրա եկամուտների պակասութեան և պատահական ընդթի պատճառով:

2. Ժողովը պարտք է դնում միութենական և նամանաւանդ արտասահմանեան թիւերի և եկեղեցիների, առաջնորդների և հայ համայնքների վրայ հոգալ պարբերական նպաստներով Մ. Աթոռի բազմաութեան կարիքները, նրան արժանալի դիրք տալու նպատակով:

3. Մ. Աթոռի կարիքների վրայ ժողովը հրաւիրում է Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներին առանձին ուշադրութիւնը:

4. Յանձնարարել Գերագոյն Հոգեւոր Խորհրդին՝ քննութեան առնել և հնարաւորութեան չափով իրագործել հաստատուն եկամուտների աղբիւրներ ստեղծելու միջոցները, ինչպէս են կամաւոր տուրք սահմանելը, մոմալաւանդութիւն և այլ հնարաւոր միջոցներ:

Օրակարգի երրորդ հարցի՝ այն է Հայաստանի հայ եկեղեցու բարեկարգութեան մասին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կողմից զեկուցում է կարգում Տ. Գեորգ Արքեպիսկոպոս: Այդ զեկուցման հիման վրայ ժողովը հաստատում է նախահանգուցել Կաթողիկոսի 5 կանոնական կոնդակները: (ա) Քահանաների կրկնամուսնութիւն:

նր (Թ. 644, Նոյեմբեր 11, 1922). (բ) Ազգակցական հինգերորդ և խնամական չորրորդ աստիճանի և հոգեւոր ազգակցութեան, կնքահօր և սանուհու ամուսնութեան արգելքի վերացումը (Թ. 645, Նոյեմբեր 11, 1922). (գ) Նոր տոմար մտցնելու (Թ. 350, Նոյեմբեր 3, 1923). (դ) Երգեհոնի գործադրութեան (Թ. 350, Նոյեմբեր 3, 1923). և վերջապէս (ե) Հայաստանի հայ եկեղեցու ընտրութեան սկզբունքի վերահաստատութեան, թեմական խորհուրդների և առաջնորդների նկատմամբ (Թ. 678, 1917): Երկրորդ կոնդակի՝ կնքահօր և սանուհուն վերաբերեալ մասը ժողովը ընդունում է միայն ժամանակաւոր՝ մինչև յետագայ Ազգային-եկեղեցական ժողովի նոր սահմանադրութեան հաստատութիւնը: Բարեփոխութեան միւս խնդիրների վերաբերութեամբ ժողովը յանձնարարում է Բարձրագոյն Հոգեւոր Իշխանութեան՝ մասնագէտների ձեռքով յարուցուած հարցերը ուսումնասիրել, ապա Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, երկու պատրիարքների կարծիքները լսելուց յետոյ՝ անհրաժեշտը հրատարակել կանոնական կոնդակով, իսկ մնացածը պահել ի վերջնական հաստատութիւն յետագայ Ազգային-եկեղեցական ժողովի:

Նոյեմբերի 11-ին երեկոյեան Նիստում որոշում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եղանակը. թեկնածուները ընտրութիւնը կատարել թերթիկներով, իւրաքանչիւր ձայնի համար միայն մի անուն գրելով, իսկ վերջնական ընտրութիւնը տուգրեով:

Ժողովը անհրաժեշտ է համարում Գերագոյն Հոգեւոր Խորհրդի գոյութիւնը՝ նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բաղկացած չորս հոգեւորականներից, որոնց ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովը, և երկու աշխարհականներից, որոնց հրահանում է այդ կազմը ներկայ ժողովին մասնակցող աշխարհական պատգամաւորներին հաւասար իրաւունքով. հոգեւորականների կողմից դուրս եկող անդամների տեղ մնացածներն ընտրում են նոր անդամ հոգեւորականներից զարմեալ հաւասար իրաւունքով:

Նոյն Նիստում Ազգային-եկեղեցական ժողովը յանձնարարում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին իւր նախագահ վեհապառ Կաթողիկոսի միջոցով միջնորդութիւն յարուցել Խորհրդային Հայաստանի Կառավարութեան առաջ՝ բաւարարութիւն տալու Հայոց եկեղեցու անհրաժեշտ և անյետաձգելի կարիքներին, այն է իրագործել հոգեւոր դպրոցի բացումը Հայոց եկեղեցու պաշտօնեաներ պատրաստելու համար, ունենալ պարբերական ամսաթիւեր իւր օրդան Ս. Էջմիածնի Բարձրագոյն Հոգեւոր Իշխանութեան, ստեղծել եկամտի հաստատուն աղբիւրներ Ս. Էջմիածնի Տաճարի և միաբնութեան պահպանութեան, բացուելիք դպրոցի և պարբերական օրդանի ծախսերի և եկեղեցական գրքերի տպագրութեան համար:

Նոյեմբերի 12-ին Ազգային-եկեղեցական ժողովի Նիստը պիտի գումարուի Տաճարում՝ կատարելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամների ընտրու-

թիւները նախապէս եղած ազդարարութեան համաձայն ժամը 11-ին հաւաքուում են բոլոր պատգամաւորները Վեհաբան և այնտեղից Տ. Տեղադիր գլխաւորութեամբ հանդիսաւոր երթով իջնում են տաճարի Փակեում են դռները, որպէսզի հաղորդակցութիւն չլինի դրսի հետ: Պատշաճ սաղմոսներէից և աղօթքներէից յետոյ Տ. Տեղադիր բացուած է համարում ժողովը: Թերթիկներով, գաղտնի քուէարկութեան հետեւանքն է, եօթնասուն և ինը ձայնից (Արշակ Զօպանեանը այս քուէարկութիւնից յետոյ միայն հասաւ եւ մտաւ տաճար) 51 ձայն ստանում է Տ. Խորէն Արքեպիսկոպոս, 12 ձայն Մատթէոս Արքեպիսկոպոս, 10 ձայն Մեսրոպ Արքեպիսկոպոս, 2 ձայն Տ. Բագրատ Արքեպիսկոպոս և մի մի ձայն Տ. Թորգոմ, Գարեգին, Գեորգ Արքեպիսկոպոսներ: Բացի Խորէն և Մատթէոս արքեպիսկոպոսներէից բոլոր հրաժարուում են քուէարկութիւնից:

Կէս ժամ ընդմիջումից յետոյ կատարուում է երկրորդ և վերջնական քուէարկութիւնը: Աւթասուն ձայնից վաթսուն ձայն ստանում է Տ. Խորէն Արքեպիսկոպոս, տասնևինը ձայն ստանում է Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս, իսկ մէկը սպիտակ թերթիկ Տէր Խորէն Արքեպիսկոպոս յայտարարուում է ընտրուած՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Մեսրոպ Արքեպիսկոպոս որպէս աւագագոյն, շնորհաւորում է ընտրութիւնը, և բոլոր պատգամաւորները մի մի մօտենում և համբուրում են ընտրեալի աջը:

Որով ընդմիջումից յետոյ կատարուում է Գեորգոյն Նոգեւոր Խորհրդի անդամների ընտրութիւնը: 63 ձայն ստանում է Գարեգին Արքեպիսկոպոս, 52 ձայն Գեորգ Արքեպիսկոպոս, 50 ձայն Մատթէոս Արքեպիսկոպոս, 44 ձայն Մեսրոպ Արքեպիսկոպոս, 43 ձայն Բագրատ Արքեպիսկոպոս: Առաջին շորսը պիտի համարուէին ընտրուած, բայց որովհետև Տ. Մատթէոս, Տ. Մեսրոպ և Տ. Բագրատ արքեպիսկոպոսները հրաժարուեցին, ընտրուած համարուեցան միայն առաջին երկուսը, իսկ կրկնաքուէարկութեամբ ապա Տ. Արտակ և Տ. Արսէն եպիսկոպոսները, որով լրացաւ շորս անդամների թիւը:

Բոլոր պատգամաւորների միահամուռ ցանկութեամբ նորեւոր Հայրապետի օժուժը կատարուեց հետեւեալ օրը՝ Կիւրակի՝ Նոյեմբերի 13-ին: Ձեռնադրութեան և Օծման կարգը կատարող 12 եպիսկոպոսների աւագն էր Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսը:

Նոյն օրը հանդիսաւոր ճաշկերոյթ էր բոլոր պատգամաւորների և հիւրերի մասնակցութեամբ, ներկայ էր և նորապստ շայրապետը, որ օրհնեց պատգամաւորութեան և հայ ժողովրդին, զօհունակութիւն յայտնելով և Խորհրդային Հայաստանի կառավարութեան:

Նոյն երեկոյան ժողովի վերջին նիստն էր, որ զրադուեցաւ շնորհակալութեան ուղերձ պատասխելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան անունով, ցոյց տուած բարեհաճ վերաբերմունքի համար:

Ժողովի վերջում երեւաց Ս. Հայրապետը, կրկին օրհնելով պատգամաւորութեան, յայտարարեց Ազգային-եկեղեցական ժողովը փակուած:

Անդամ Գեւորգոյն Նոգեւոր Խորհրդի՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Փառուղար՝ Յ. ՔՈԶԱՐԵԱՆ

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ՊԱՇՏՈՆ ԵՎ ԱՆՔ

Բացի 30 դեկտ. բուսկիր շնորհակալութեան եւ օրհնութեան նամակէ մը, զոր Ամենայն Հայոց Մրբագնացոյն Հայրապետը ղրկած է Ս. Պատրիարք Հօր, ի պատասխան իւր հեռագրական շնորհաւորութեանց, նման Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին ղրկուածին, Ն. Ս. Օծուքիւնը հանած է գրաբար նամակով մը եւս պատասխանել այն նամակին, զոր Ս. Պատրիարքը ղրկած էր ի Մայր Աթոռ, շնորհաւորական հեռագիրէն ետքը: Ստորեւ կը տեսնուին այդ երկու նամակները:

Առ Ն. Ս. ՕԾՈՒՔԻՆ

Տ. Տ. ԽՈՐԷՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ապիսկոպոսապետն մեր եւ Պատուական
Հայրապետն Ամենայն Հայոց
ի Մայր Աթոռ Կարգիկի
Մերոյ Լցմիաձնի

Ի ՇՆՈՐՀԱՆՈՐՈՒԹԻՒՆ

ՎԷՀԱՓԱՌԻ ՏԷՐ ՀՈՐԵՆՈՐ

Լուր աւետաւոր ընտրութեան եւ Օծման Ձերոյ յաթոռ հանուրց Հայաստանեայցս ելից զսիրտ ամենեցուն և զմեր անպատում խնդութեամբ:

Օրհնեմք զանհասանելի կամս Անեղին, որ յայց եւ ազգի մերում, և պարգեւաց մեզ քահանայապետ բարի և առաջնորդ իմաստուն, որ հովուեացէ զհօտ բանաւոր առաքելական Եկեղեցոյս՝ առ ջուրս հանգրստեան սրբոյ Աւետարանի:

Առ երջանիկս ունիմք զանձինս, տեսեալ զի ուր ուրեմն ի զերեւելին ամենայն կարծիք թերահատուից, և վերստին նորոգեալ պայծառացաւ կարգ յաջորդութեան Սրբոյն Դրիգորի, անդէն ի նմին տեղւոյն ուրանօր լուսատուն հոգւոց մերոց կազմեալ հանգերձեաց յաստուածախոս տեսեան իւրում զկերպ և զվիճակ խորա-